**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<-21->> փետրվարի-----------------2025թ.          N ՄՈ_1271-_-Ա

ք. Արմավիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 01-Ի N ՄՈ/34-2021 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 դեկտեմբերի 7-ի N79-Ն հրամանը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի փետրվարի 19-ի զեկուցագիրը .

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի փետրվարի 01-ի «Լիլիթ Պետրոսյանին «Վաղարշապատի Մեսրոպ Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու մասին» NՄՈ/34-2021 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

   1) որոշմամբ հաստատված հավելվածի 3.1 կետում «318303 (երեք հարյուր տասնութ հազար երեք հարյուր երեք)» բառերը փոխարինել «358644 (երեք հարյուր հիսունութ հազար վեց հարյուր քառասունչորս)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և տարածվում է 2025 թվականի հունվարի 3-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

2025-02-21 14:12:19 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՄԱՐԶՊԵՏ՝**          **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**